դաք որ 'ի մէջ աշխարհին հայոց եթէ վաճառեսցի, հատուցանել պարտ է 'ի գնոյ հարիւրին հինգ, բայց ակունք հարիւրին երկու, ոսկի և երծաթ մտանելն ազատ։

ԳԼՈՒԽ ՆԾԹ.

Ամենայն ձեռագործ եթէ յաշխարհէ մերմէ, և եթէ 'ի տարբ յաշխարհէ եկեալ ընդ մեզ եթէ բեհէզ, եթէ բամբակէ, եթէ կտավհատէ, եթէ բրթէ, և կամ ոսկաթել և երծաթաթել յօրինեալ, (բայց 'ի հրահայելեաց ձեռագործից), պարտ է կնքել 'ի ծայրն բանին կնքաւ տանն հայոց, 'ի քաղաքին որում գտանի իրն, և 'ի նմանէ հանել հարիւրին հինգ հարկն, և որ ոք ձեռագործ որ ոչ ունիցի նշան կնքոյ լուանողն և ջարադանայ յառնողն մի՛ լուասցի և մի՛ յօրինեսցի, և ում ոք ձեռի և որ ոք որ գտանիցի ձեռագործ առանց կնիք, նա՛ հատուցանէ հարկն և ընդունեսցի կնիք 'ի վերայ ձեռագործին։

ԳԼՈՒԽ ՆԿ.

Ամենայն արու ով ոք որ իցէ եթէ համարձակեսցի լրբաբար ձեռս ձգել և շօշափել և կամ ամօթ առնել կանանց պատժեսցի։

ԳԼՈՒԽ ՆԿԱ.

Ով ոք որ լրբաբար մտցէ 'ի տուն այլոց